

ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍՈՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Լոմբարդիայի՝ (Հյուսիսային Իտալիա) գիտությունների ակադեմիան պարբերաբար հրավիրում է լեզվաբանների միջազգային համաժողովներ։ Այս տարի Միլանում հրավիրվեց հերթական 5-րդ կոնգրեսը, որը կայացավ սեպտեմբերի 1—5-ը։ Սովետական Միության պատվիրակության կազմումն էին ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, աշխարհահռչակ բանասեր և լեզվաբան Վ. Մ. Ժիրմունսկին, լենինգրադի լեզվաբանության ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Վ. Դունասկայան, պրոֆ.-դոկտոր Մ. Վ. Ստերլին-Կոմենսկին և ուրիշներ։ Համաժողովի նախագահն էր «նոր լեզվաբանություն» ուղղության հիմնադիր, մեծ հռչակ վայելող Վիտորիո Պիզանին։ Գիտաժողովին մասնակցում էին հայտնի լեզվաբաններ Անդրե Մարտինեն (Ֆրանսիա), ակադեմիկոս Վ. Ի. Գեորգիևը (Բուլղարիա), պրոֆ.-դոկտոր Եվ. Կասիրիուն (Հայդելբերգ), պրոֆ.-դոկտ. Պավել Թրոստը (Վիեննա), պրոֆ.-դոկտ. Անտոն Շերերը (Գերմանիա), պրոֆ.-դոկտ. Վալտեր Էբլարդին (Հոմ) և այլք այսպիսիք։

Համաժողովի օրակարգում գրված էին շատ զեկուցումներ, այդ թվում՝

- ա) հնագույն եվրոպայի լեզվական վիճակը.
- բ) եվրոպայի հնդեվրոպականացումը և հնդեվրոպական լեզվաընտանիքի կազմավորումը.
- գ) հունարենը և եվրոպական լեզուները.
- դ) լատիներենն ու նոր լատիներենը և գերմանական աշխարհը.
- ե) սլավոնական և բալթիական լեզուների հարցը.

զ) ժամանակակից եվրոպայի լեզուների բառային կազմը և այլն։

Զեկուցումների նպատակն էր քննելու եվրոպական լեզվաընտանիքի գոյացման և նրա մեջ մտնող լեզուների հետագա զարգացման ու փոխազդեցության հարցերը։

Հնդեվրոպական մեկ նախալեզու լինելու հարցը վաղուց է ենթարկվում վիճարկման։ Հնդեվրոպաբաններից շատերը այժմ հակված են կարծելու, որ հնդեվրոպական նախամայր լեզու չի եղել, այլ եղել պարզապես շատ հին ժամանակներում (7—4000 տարի ն. թ. մեր դարաշրջանը) առաջացել է լեզվական դաշնակցային միություն՝

ստեղծելով լեզվական ընդհանրություններ ունեցող մեծ լեզվախումբ, որ գիտնականների կողմից ընկալվել է որպես մի մայր լեզու։

Հետագայում դաշնակցային լեզուներից յուրաքանչյուրն ընթացել է իր ուղիով և վերափոխության ենթարկվելով թե ընդհանրություններն ու թե տարբերությունները դուրսբերել է հնդեվրոպական մայր լեզուները, որոնցից էլ, շարունակելով ներքին և արտաքին զարգացումը, առաջացել են ժամանակակից հնդեվրոպական լեզուները։ Մի շարք զեկուցումներ նվիրված էին լատիներենի, հունարենի և եվրոպական աշխարհի այլ լեզուների փոխազդեցություններին։

Զեկուցումներից մեկը (Մարտինեն) նվիրված էր եվրոպայի արդի լեզուների տիպաբանությանը, մեկ զեկուցում էլ (Բեյարդի)՝ փոխառությունների և միջազգային ընդհանուր բառապաշարի հարցին։

Իմ զեկուցումը կրում էր «Հայերենի ձևաբանական համակարգի պատմական բարեշրջությունը» անունը։ Այդ հարցով սկսել եմ զբաղվել դեռ 1937 թ. (Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն), և թեև այն ժամանակ որոշակի եզրակացությունների հանգեցի, սակայն մինչև հիմա անընդհատ ստուգման էի ենթարկում դրանք և ճշտումներ մտցնում այդ եզրակացությունների մեջ։

Մեր լեզվի հնդեվրոպական նախավիճակն, ինչպես այժմ ընդունված է ասել, ուներ հնդեվրոպական այլ լեզուների հետ հնչյունական և ձևաբանական համակարգի ընդհանրություններ։ Զեկուցումներից մեկը (Բեյարդի) կազմության մեջ, ըստ որում այդ կազմությունը բաղկացած էր բառահիմքի բավական բարդ վիճակից և վերջավորությունից։ Բայերի հիմքերն ունեն թե-

1 Տե՛ս A. C. Гарнбьян. «Об армянском консонантизме», Вопросы языкознания, 1959 г., № 5; там же. «Еще раз об армянском консонантизме», 1962 г., № 2; Ero же: A propos de la première mutation des consonnes occlusives dans l'arménien; Studia classica et orientalia, Roma, 1969.

մատիկ և անթեմատիկ կազմություն, ըստ որում անթեմատիկ կազմությունն ավելի հին լինելով՝ արտահայտված է բառերի փոքր քանակի մեջ: Հայերեն լեզվի ձևաբանությունը իր ինքնուրույն զարգացման պրոցեսում, հավատարիմ մնալով հնդեվրոպական համակարգին, պարզեցրեց և կատարելագործեց այն՝ միաժամանակ վերածելով բոլոր բառերը թեմատիկ տիպի: Շարունակելով իր ձևաբանական համա-

կարգի ներքին մշակումը՝ հայոց լեզուն հրաժարվեց բառերի ուղիղ ձևի վերջավորություններից՝ կորցնելով սեռի ու բառահիմքի կարգերն. արտահայտող ձևույթները, ուժեղացրեց թեքման ձևույթները և ստեղծեց հոլովման և խոնարհման մի կատարյալ համակարգ՝ արտահայտելով դիրքի շարժանականների (ա, ե, ի, ո) և մեկ երկրորդական (ու) միջոցով. ահա օրինակը.

Անուններում

Հոլովումներ

Ա (արտաքին և ներքին թեքում)		Ի (ներք. թեքում)	Ի (արտաքին թեքում)
Ուղղ.	Արշակ, տուն	աստղ	բան
Սեռ.	Արշակայ..., տան...	աստեղ...	բանի...
Ո (արտաքին թեքում)		Ու (արտաքին և ներքին թեքում)	
Ուղղ.	գետ	զէն, ար	
Սեռ.	գետոյ...	զինու, արու...	

Բայերում

Խոնարհումներ

ա	ե	ի	ո	ու
Աղամ	սիրեմ	խաւսիմ	գոմ	թողում
աղաս...	սիրես...	խաւսիս...	գոս...	թողուս...

Այսպիսով գրաբարն ունի՝

5 հոլովում՝ ա, ե, ի, ո, ու.

5 խոնարհում՝ ա, ե, ի, ո, ու.

Հնդեվրոպական ոչ մի լեզու, գրաբարից բացի, չունի այսքան հետևողականորեն արտահայտված հոլովման և խոնարհման միևնույն ցուցիչը (թեքման ձևույթը):

Շնորհիվ այս բարեշրջման հայերենը գրաբարի մեջ ծայրահեղորեն պարզեցրեց իր հնդեվրոպական ձևաբանական համակարգը՝ հասցնելով այն միաժամանակ ամենակատարյալ վիճակի: Անկամ հնդեվրոպական թեքականության ամենարարդ երևույթները՝ ձայնդարձը, նա առանձիններում վերածեց ներքին և արտաքին թեքման, պարզ և խառը տիպի հոլովման համակարգի (Արշակ-Արշակայ, տուն-տան, զէն-զինու, ար-արու, զինի-զինոյ-զինեալ և այլն):

Ձևաբանական համակարգի այս չափի կատարելագործմամբ ու պարզեցմամբ գրաբարը, իր բոլոր լեզուների համեմատությամբ (լատիներեն, հունարեն, հին վերմաներեն, հին սլավոներեն և այլն), գրավում է առաջնակարգ տեղ և այդ հարցում ներկայացնում նրանց ամենակատարյալ տիպը՝ թողնելով մյուսներին զարգացման նախորդ աստիճաններում: Օրինակ՝ լատիներենը

և հին ռուսերենը բայերի հարցում կատարել են նույն էվոլյուցիան, առանց, սակայն, սխտեմը հասցնելու տրամաբանական վախճանին, մինչդեռ գոյականների հարցում ընթացել են այլ ուղիով: Այսպես՝ բայերի խոնարհումը լատիներենում արտահայտվում է a, e, i թեքական ձևույթներով (amare, manere, audire), մինչդեռ գոյականներում այդ ձևույթների հետքերը չկան:

Հին ռուսերենն էլ իր խոնարհման նշանները դրսևորում է a, e, и ձայնավորներով, թեև գոյականներում այդ հետևողականությունը չունի: Նույնպես և ժամանակակից ռուսերենն ունի խոնարհման a (читать), e (владеть) և и (возить) ցուցիչներ կամ ձևույթներ (բավական անհետևողական), բայց հոլովական սխտեմում նման հետևողականություն չունի:

Հետևաբար, ձևաբանական համակարգի զարգացման հարցում գրաբար լեզուն պետք է լինի համեմատելի մեծություն, մինչդեռ մյուսները՝ միայն համեմատվող:

Գիտության զարգացման մեջ անարդարացիորեն հակառակն է եղել Գրաբար լեզվի ձևաբանական ողջ համակարգը (անունների և բայերի) կարելի է արտահայտել հանրահաշվական

Այս հանդիպակադրությունը բաղկացած է բա-
յրմաստ և զլխավոր ժամանակ արտահայտող
ձևային (A = նստում, նստելու, նստել, նրս-
տած (նստ-, կնստ-, պիտի նստ-) և օժանդակ
բայի կամ ներկայի կամ անցյալի ձևերից (սահ-
մանականում) կամ օժանդակ բայի դեր կա-
տարող դեմքի վերջավորություններից (ըղծա-
կան, պայմանական և հարկադրական եղանակ-
ներում (b = եմ, ես... ամ, աս... c = էի, էիր...
այի, այիր...), որի հետևանքով ստացվում է
հետևյալ բանաձևը.

$$A + b \quad \text{հանդիպակադրված} \quad A + c \\ (A + b \parallel A + c)$$

Բարրառների ձևաբանության այս բանաձևը
բացահայտում է դրաբարի բանաձևի մի դիժը, այն է՝
թեքականության ցուցիչը (f), ասել է թե բար-
րառները, այլև նրանց հիման վրա դրաբացած աշ-
խարհաբար դրական լեզուները կորցրել են թե-
քականության հասկացական կարգը և դրանով
արմատապես տարբերվել նրանից, վերածվելով
կցական տիպին մոտեցող լեզուների: Դա էլ
հենց նրանց մեջ եղած հիմնական տարբերու-
թյունն է: Այս երևույթը նկատելի է հնդեվրոպա-
կան բոլոր նոր լեզուներում (հատկապես
ֆրանսերենում), բացի ուսական խմբի լեզու-
ներից:

Այսպիսով, հայերենի ձևաբանական համա-
կարգը սկսվել է հնդեվրոպական բարդ վիճակից,
պատմական զարգացման պրոցեսում պարզե-
ցրել է այն և հասցրել ամենակատարյալ թեք-

ման տիպի (ներքին, արտաքին), ապա այդ
զարգացած շրջանից անցել է նոր շրջան՝ մա-
հացնելով միայն թեքականության հասկացա-
կան կարգը, որից և ստացվել է արդի հայերենի
կցական տիպին մոտեցող ձևաբանական համա-
կարգը: Ուստի հայերենի ձևաբանական էվոլյու-
ցիայի բանաձևը կլինի՝

$$\text{Հնդեվրոպ. դրաբար} \quad \text{արդի հայերեն} \\ Af + a \quad A + f + a \quad A + a \quad (\text{դոյականներում}), \\ A + b \parallel A + c \quad (\text{բայերում}).$$

Այդ փուլերն անցել են նաև քույր լեզուները,
սակայն նրանք իրենց ձևաբանական համակար-
գերի էվոլյուցիան կատարել են թերի, միակող-
մանի և առանց բարձր աստիճանի զարգացման:

Մեր աշխատանքի հաջորդ փուլը լինելու է այդ
պրոցեսի պատճառների, ազդակների և պայման-
ների պարզաբանումը:

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔԱՆ
(Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս)

* * *

Հոմբարդիայի դիտությունների ակադեմիայի
լեզվաբանների միջազգային կոնգրեսում լավա-
զույն զեկուցումներ կարդացած գիտնականները,
նրանց թվում նաև ակադեմիկոս Արարատ Ղա-
րիբյանը, արժանացան Հոմբարդիայի գիտու-
թյունների ակադեմիայի նախագահության և
Միլանի քաղաքային խորհրդի ոսկե հուշամեդալ-
ների (ծան. խմբ.):